



«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ
ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Դասավանդման մոտեցումներ

Առարկան՝ Հայոց լեզու և գրականություն

Հետազոտող ուսուցիչ՝ Լ. Կիրակոսյան

Ուսումնական հաստատություն՝ Արևածագի Կ. Մելիքսեթյանի
անվան մ/դ

Երևան 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն.....	3
Ինչպես է մարդը սովորում.....	4
Արդյունավետ ուսուցման մոտեցումներ.....	5
Ուսուցման մեթոդներ և հնարներ	8
Ուսուցման պլանավորում.....	9
Եզրակացություն.....	11
Գրականություն	16

Ներածություն

Ուսուցման բովանդակությունը, նրա ընթացքն ու սկզբունքները, մեթոդներն ու կազմակերպչական ձևերը ամփոփվում են «Ինչ սովորեցնել», «Ինչպես սովորեցնել» դիդակտիկական հասկացություններում: Ուսուցիչը հստակ պատկերացնելով դրանց համակարգերը, սահմաններն ու շրջագծերը առաջնորդվում է մեթոդական ուսուցողական մի շարք սկզբունքներով.

- Ուսուցումը պետք է ընթանա պարզից դեպի բարդը, անհայտից դեպի հայտնին:
- Սովորողի ուշադրության ու դիտողականության զարգացման համար լայնորեն կիրառել գործնական պապապմունքներ:
- Կարևորել ինքնուրույն ստեղծագործական նախաձեռնությունը, ազատ մտածողությունը, խմբում իրեն դրսևորելու կարողությունը:
- Մշտապես կիրառել ուսուցումն նոր մեթոդներ ,քանի որ դրանք բացարձակ ու հավերժ չեն և փոփոխվում են ` կախված ժամանակից և կոնկրետ հանգամանքից:

Լավ սովորեցնելու համար պիտի շարունակ սովորել և լինել աշակերտի դերում. այսինքն` սովորեցնել` սովորելով: Սովորողի հետ երկխոսության կամուրջը պետք է լինի ամուր շատ ամուր: Կրթության և դաստիարակության գործընթացը մի անբաժանելի միասնություն է, փոխկապակցված ամբողջություն, փութկոտություն չի սիրում, այլ սիրում է համբերատար, անձանձիր, համակողմանի աշխատանք, ոսկերչական աշխատանք:

Կրթության մատչելիությունը և հասանելիությունը` որպես հասարակության առաջընթացի հիմնական միջոց ամրագրվել է դեռևս 1990-թ-ից:

ԻՆՉՊԵՍ Է ՄԱՐԴԸ ՍՈՎՈՐՈՒՄ

Սովորելու գործընթացը մեզ հնարավորություն է տալիս զարգանալու և հասկանալու գիտությունը: Սկզբից մենք առնչվում ենք կարճաժամկետ հիշողության հետ և տեղեկություն ենք ստանում արտաքին աշխարհից: Մենք պետք է կենտրոնացնենք մեր ուշադրությունը, որը կարևոր է ոչ միայն ուսուցման համար, այլ նաև այն համարվում է մարդու կյանքի կարևորագույն ռեսուրսը: Մարդու վրա ազդելու համար կարևոր է գրավել նրա ուշադրությունը, որից հետո կտիրանանք նրա ժամանակին փողերին, և կարող ենք ազդել նրա վրա:

Կրթության ամենագերագույն խնդիրներից մեկը այն է, որ աշակերտների ուշադրությունը գրավված է տարբեր բիզնես ինդուստրիաների կողմից: Եվ այդ ժամանակ կրթությունը պարտվողի դերում է: Մարդկության կյանքում ի տարբերություն չափահասների՝ երեխաները ոչնչով գրավված չեն: Դրա համար նրանք պետք է սովորեն և պարապեն: Այսօր աշակերտները այլևս պարապ չեն, նրանք զբաղվում են տարբեր խաղերով: Նրանք զբաղվում են սոցիալական ցանցերով: Նրանց քիչ ժամանակ է մնում սովորելու համար, և դրա համար պետք է գրավել նրանց ուշադրությունը: Եվ այսպես առաջին քայլը սովորելու ուշադրության կենտրոնացումն է: Որից հետո նյութը տեղափոխվում է նրանց կարճաժամկետ ուշադրության մեջ: Եվ որը շատ սահմանափակ է, նա չի կարող միայն դրանից շատ բան սովորել: Որոշ գիտնականներ համոզված են, որ մարդը սկզբից կարող է սովորել 4-5 նոր բան: Բազմաթիվ մասնագետներ նշում են, որ մտաբերումը արդյունավետ ձև է, որտեղ տեղի է ունենում գիտելիքի ակտիվացում, իմացածը արտահայտելը: Շատ կարևոր է աշակերտներին տալ այնպիսի օրինակներ և առաջադրանքներ, որտեղ հարցի պատասխանի մի մասը ներառված լինի խնդրի լուծման մեջ: Մա հնարավորություն է տալիս, որպեսզի աշակերտները սովորեն քայլ առ քայլ:

ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐ

Վերջին տարիներին հաճախակի հակադրում են ուսուցման ավանդական մոտեցումները: Եվ այդ հակադրումը կատարվում է այն համատեքստում, որ աշակերտակենտրոն մոտեցումները շատ լավն են, իսկ ավանդական մոտեցումները՝ վատը, որը գիտականորեն հիմնավորված չէ: Աշակերտներին պեքտ է մոտիվացնել, ուսուցումը հետաքրքիր դարձնելու համար: Բայց այդպես չեն բացատրվում ավանդական մոտեցումի օգտագործումը: Ուսուցման համար շատ անհրաժեշտ է ուսուցչի բացատրական խոսքը: Աշակերտները հաճախ «զլուխ են պահում» խմբային աշխատանքների ժամանակ: Սկզբից թվում է, թե երեխաները շատ ակտիվ են, բայց պարզվում է, որ նրանց գիտելիքների մակարդակը ցածր է: Բոլոր մեթոդները շատ օգտակար են, նոր մանկավարժական գործունեության մեջ պետք է լինեն մեթոդների և հնարների համադրում:

Ուսուցման մեթոդները պետք է ընկալել որպես գործիք, որի կիրառման մասին որոշումը կայացնում է հենց ինքը՝ ուսուցիչը: Դասապրոցեսը պետք է բաժանել 3 մասի և առաջադրվեն մեթոդներ: Աշակերտների մեջ սովորաբար տպավորվում է հաղորդակցության սկզբի և վերջի հատվածները:

Ուսուցիչը պետք է առաջին բույներին գրավի աշակերտների ուշադրությունը, որը և կնպաստի այդ դասի արդյունավետ ընթացքին: Ներկայացնենք մի քանի հնարներ, որով կարելի է սկսել դասը:

Աշակերտներին մոտիվացնում է

- գաղտնիքների առկայությունը/ Կարելի է աշակերտների միտքը գրավել նաև զարմանալի մտքերով: Հետևաբար դասը կարելի է սկսել նաև անսպասելի նորությունով: /
- աշակերտի կողմից ուրիշի դերստանձնելը, կամ սկսել թևավոր խոսքով՝ ստեղծելով աշխատանքային տրամադրություն:

Ամեն մի դաս և դասարան տարբեր է: Մի տեղ այդ մոտեցումը կարող է աշխատել, իսկ մյուս տեղում՝ ոչ: Դասի ընթացքում շատ հարմար է կիրառել մտազրոհ մեթոդը: Դրա

միջոցով ուսուցիչը շատ մտքեր է հավաքում տվյալ թեմայի վերաբերյալ, որտեղ շատ կարևոր է մտքերի քանակը: Պետք է նաև որպեսզի աշակերտները առանց մտածելու պատասխանեն ուսուցչի հարցին: Այդ դեպքում ուսուցիչին պարզ կդառնա աշակերտը ունի պատկերացում այդ թեմայի վերաբերյալ: Մասնագետների կարծիքով աշակերտները մենաշնորհում են մտագրոհը: Այդ ժամանակ դանդաղ մտածող աշակերտը կարող է դուրս մնալ մտագրոհից: Դրա համար օգտագործում են դրա գրավոր տարբերակը: Ուսուցիչը պետք է հանձնարարի աշակերտներին թղթի վրա գրել իրենց մտքերը:

Դասարանից դուրս է հրավիրվում երեք աշակերտի: Դասարանին ներկայացվում է դասի թեմայի հետ կապված որևէ պատկեր: Ապա դրսի երեխաներից մեկը ներս է գալիս, որև իր տեսած պատկերը ներկայացնում է երկրորդին, վերջինս էլ երրորդին, ով դասարանին պատմում է ինչի մասին է խոսքը: Երրորդ մասնակցի պատմածը տարբերվում է նրանց տեսածից, որից հետո կազմակերպվում է քննարկում-վերլուծություն: Եվ աշակերտները հասկանում են, որ հասարակական հասարակություններում շատ կարևոր է հաղորդակցությունը, որը և հանգեցնում է հակասությունների:

Նոր նյութի բացատրման ժամանակ ուսուցիչը չպետք է գերազանցի ծավալը, որը աշակերտի հիշողությունը չի կարող ըմբռնել: Դրա համար սկզբից պետք է բացատրել փոքր կտորներով: Ամեն յոթ բույսի ընթացքում կանգ առնել և պարզել՝ արդյոք երեխաները հասկանում են նոր նյութը:

Շատ հարմար է երկար նախադասությունից հետո օգտագործել կարճ նախադասություն: Հետո միջին չափի և այդպես աստիճանաբար դժվարացնել աշակերտի ուշադրության կենտրոնացման գործընթացը:

Աշակերտները շատ լավ են սովորում երբ խոսքն ու պատկերը զուգակցվում է, դրա համար պետք է օգտագործվեն գծապատկերներ: Պետք է նաև իմացածը կապակցել: Դրա համար պետք է նոր նյութը անընդհատ կապակցել նախկին նյութի հետ: Կարելի է ստեղծել նաև խմբեր, որոնք ստանում են տեքստը և մոտենում են համապատասխան անվանումներով խմբերին՝ հետազոտողների, ստեղծողների, գրավոր աշխատանքների, բացահայտողների կենտրոններ:

Այսպես ուսուցիչը ավելացնում կամ պակասեցնում է կենտրոնների թիվը փոխելով և հարմարացնելով նրանց անունները: Օրինակ. Բացահայտողների կենտրոնում աշխատողները կարդում են տեքստը, կատարում նշումներ, արտահայտում են իրենց հիմնական միտքը: Եվ այդ ժամանակ ենթատեքստը ներկայացնում են ընկերներին: Հետազոտողների կենտրոնում աշակերտները ընթերցելուց հետո կատարում են նշումներ, արտահայտելով հիմնական միտքը և ենթատեքստը ներկայացնում ընկերներին: Հետազոտողների կենտրոնում աշակերտները կարդալուց հետո, օգտվում են ձեռքի տակ եղած այլ աղբյուրներից, գրականություն, համացանց և լրացուցիչ նյութեր հայթայթում տեքստի վերաբերյալ: Ստեղծագործությունների կենտրոնում նրանք վերարտադրում են, օրինակ ներկայացնում են երգ, պար, պաստառ, կամ բեմականացում: Գրավոր աշխատանքի կենտրոնում նրանք տեքստը կարդալուց հետո իրականացնում են բառացին կամ լեզվական աշխատանք տվյալ պահանջին համապատասխան: Աշակերտներին պետք է տրվի որոշակի ժամանակ, կախված տեքստի ծավալից, քանակից: Վերջում խմբերը միմյանց ներկայացնում են աշխատանքները:

Ուսումնական նյութը ավելի մատչելի դարձնելու համար շատ կարևոր է դիդակտիկ պարագաները և նյութերը, որը ակադեմիական կրթությունը մոտեցնում է կյանքին: Շատ արդյունավետ է սովորելը պարզելու հնարը: Ուսուցիչը քառաբաժանի կենտրոնում գրում է հասկացություն առարկայի կամ երևույթի անունը և առաջարկում է վերևի ձախ անկյունում գրել հասկացության սահմանումը, աջում՝ պատկերային արտահայտությունը: Կարող է լինել ձեռքով նկարված պատկեր, լուսանկար, գծապատկեր կամ աղյուսակ: Ներքևի ձախ անկյունում օրինակներ, որոնք վերաբերվում են այդ հասկացությանը իսկ աջ անկյունում օրինակներ, որոնք չեն վերաբերվում այդ հասկացությանը: Կամ սովորողները նստում են մեծ սեղանի շուրջը, ստանում քարտ կախված թեման ամփոփոխ հարցերի քանակից և սովորողների թվից: Սովորողներից մեկը իր մոտի քարտը կարդալով դնում է սեղանին: Հնչած հարցի պատասխանն ունեցող սովորողը ասում է պատասխանը և քարտը դնում սեղանին, և նախորդ քարտի հարցի շարունակությամբ կարդում իր քարտի հարցը: Հաջորդաբար շրջանաձև դրվում են բոլոր

քարտերը և ավարտին շրջվում են բոլոր քարտերը և ճիշտ դասավորվածության պարագայում քարտերի դարձերեսին երևում է թեմայի կարևոր հասկացությունը կամ միտքը: Եվ արդար աշխատանքը արժանի է վարձատրության: Աշակերտները արտահայտում են վերջնական մտքի վերաբերյալ իրենց սեփական մտտեցումները: Նոր նյութը բացատրելուց հետո ուսուցիչը դադար է վերցնում, աշակերտներին առաջարկում գրել, թե ինչ հասակացան նոր նյութից: Հետո ուսուցիչը շարունակում է բացատրել նյութը կամ կարող է առաջարկել գույզերով: Աշակերտները սկսում են քննարկել անհասկանալի հարցերը: /Ինչ ընդհանուր բաներ են գրել, կ'ա մի քանի բան, որ մոռացել են գրել, արդյո՞ք սխալ բաներ են գրել, ինչու՞ են հատկապես գրել այդ բաները:/

ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈՂՆԵՐ ԵՎ ՀՆԱՐՆԵՐ

Կան նաև շատ հետաքրքիր հնարներ, որոնք կարելի է առաջարկել աշակերտներին: Եվ նրանք կարող են սովորել միմյանցից: Ուսուցիչը հանձնարարում է իր աշակերտներին, որպեսզի հարցերով դիմեն իրենց դասընկերներին և դիմեն հարցի պատասխանը չստանալուց հետո: Կա նաև այլ հնար, որը շատ պարզագույն է և կարևոր դեր կարող է ունենալ դասապրոցեստում սովորողներին ընդգրկելու գործում: Աշակերտներից մեկը, ուսուցչի առաջարկությամբ, նշանակվում է դասի զեկուցող և վերջին դասի ավարտից 3-5 րոպե առաջ, ամբողջ դասարանին ներկայացնելուց հետո, պետք է զեկուցեն, թե ինչի մասին էր դասը, ինչ կարևոր բաներ սովորեցին և ինչ արեցին: Կան նաև այլ աշխատանքներ: Ժամանակակից դպրոցներում շատ մեծ տարածում ունի խմբային աշխատանքը: Այս աշխատանքի խոցելի կողմերից մեկը այն է, որ որոշ աշակերտներ թաքնվում են խմբի հետևում: Այս պարագայում ուսուցիչը կարող է կիրառել մի հնար, որը կոչվում է <<Ես-դու-մենք>>: Խմբային աշխատանքի վերջում որպեսզի յուրաքանչյուր աշակերտին առաջարկվի ներկայացնել իր սեփական ներդրումը խմբի աշխատանքում, խմբի մյուս անդամների ներդրումը և կերևա ամբողջ խմբի որակը: Շատ հաճախ ուսուցիչները դասապրոցեստում իրենց սոված հարցից, մեկ երկու պատասխան ստանալուց հետո առաջ են անցնում, պատճառը ժամանակի սղությունն է: Այս

Ժամանակ ուսուցչին հնարավորություն չի տրվում պատկերացում կազմել թե դասարանի բոլոր աշակերտները ինչ չափով են յուրացրել թեման: Այս ժամանակ շատ հարմար է կիրառել լուսակիր հնարի օգտագործումը: Ուսուցիչը դասարանին հարցնում է թեմայի յուրացման մասին, երբ ավարտվում է թեման: Եվ յուրաքանչյուր աշակերտ բարձրացնում է իր մոտ գտնվող կանաչ, կարմիր, դեղին թղթերից մեկը: Կանաչթերթիկը բարձրացնելուց հետո պարզվում է, որ աշակերտները յուրացրել են ամբողջ թեման: Ուլքեր որ չեն յուրացրել թեման բարձրացնում են կարմիր թերթիկը: Եթե աշակերտը բարձրացնում է նաև դեղին թերթիկները, ուսուցիչը նորից պետք է անդրադառնա թեմային: Իսկ եթե հակառակը, ապա նախընտրելի է որ կանաչ գույն բարձրացրած աշակերտները աջակցեն իրենց ընկերներին:

Կարելի է նաև դասը ամփոփել կիսատ թողնված նախադասությունների լրացմամբ: Այդ ժամանակ ուսուցիչը կարող է հնարավորություն տալ աշակերտներին ընտրել կիսատ նախադասություններ կուզենան ավարտել: Գիտելիքների կարողությունների զարգացմանը նպաստում է նաև այլ վարժություններ: Նախօրոք թղթեր պատրաստելուց հետո գրել տեքստերից գրված կարևոր անուններ, իրադարձություններ և այլ փաստեր: Եվ պետք է գրատախտակին փակցնել խառը հերթականությամբ և խնդրեն աշակերտներին, որ այն դասավորեն հերթականությամբ:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ

Սովորողների առցանց համաժամանակյա միավորային գնահատումը իրականացվում է այս գրագրի օգնությամբ: Ցանկացած գործիքի օգնությամբ (հեռախոս, համակարգիչ, պլանշետ) սովորողները նշում են պատասխանները և հետևում են հարցադրումներին: Ավարտին նրանք ներբեռնում են միավորային գնահատականները: Այս ժամանակ գնահատվում է աշակերտների կատարած աշխատանքների և արագությունը և ճշտությունը: Կարելի է նաև հարցադրումներ կազմել վարժություն ստեղծելիս: Համակարգի միջոցով խառնվում է հարցերի հաջորդականությունը: Պետք է ստեղծել տարբեր թեմաներով քանակի հարցերից կազմված վարժություններ: Այդ

վարժությունները պահպանել առցանց: Հետևել սովորողների առաջադիմությանը առցանց: Պատրաստի վարժությունները տարածել հղմամբ: Սահմանել ժամանակ յուրաքանչյուր հարցի համար: Ուսուցումը կարելի է պլանավորել դասերի ընդհանրական մակարդակով: Այդ առումով առաջարկվում են մի շարք գործիքներ: Օրինակ շատ օգտակար գործիք է ուսումնառության դիտարկված արդյուքների կառուցվածքը: Եթե ուսուցիչը ցանկանում է ուսուցումը կառուցել փոքր գաղափարից ավելի ընդհանուրը տեսնելու մոտեցմամբ:

Եզրակացություն

Եթե ուսուցիչը ցանկանում է ուսումնական գործընթացը տրոհել մասերի օգտագործվում է Բլում-Անդերսոնի աստիճանակարգումը: Ուսուցումը ավելի խելացի դարձնելու համար այդ ժամանակ ներկայացվում են այդ գործիքները: Շատ հարմար են գտել կրթության ոլորտում օգտագործել տաքսոնոմիաները: Դրանք օգնում են ուսուցումը ավելի բազմազան դարձնելու և սովորողների մոտ առաջացնելու տարբեր մակարդակի հմտություններ, որը կգարգացնի կարողություններ:

Դրանք բաժանվում են 2 խմբի՝ համադրականի և վերլուծականի: Այս պարագայում ուսուցիչը մասնավորից դեպի ընդհանուրը գնալով գիտելիք է մատուցում աշակերտներին: Իսկ վերլուծականի դեպքում իմացությունը բաժանվում է մի քանի մասերի: Եվ ուսուցումը կատարվում է յուրաքանչյուրի զարգացման ուղությամբ: Շատ կրթության մասնագետներ մշակել են ուսումնառության հետաքրքիր մի աստիճանակարգում: Այն սովորողների կողմից նյութի յուրացումը ներկայացնում է 5 մակարդակներով: Այն կոչվում է ուսումնառության դիտարկված արդյունքների կառուցվածք: Այս աստիճանակարգումը ցույց է տալիս ուսումնական նյութի յուրացման աճը, սկսելով գրոյական կապակցումից ավարտելով լիարժեք նոր գիտելիքի ստեղծմամբ: Հայաստանի դպրոցական գրագրեր և դասագրքեր մշակող մասնագետների և իհարկե ուսուցիչների համար չափազանց օգտակար է այս աստիճանակարգումը: Այն հնարավորություն է տալիս ուսուցիչներին ուշադրության կենտրոնում պահելու թե ինչ չափով են աշակերտները կարողանում կապակցել գիտելիքըն դրա հիման վրա ստեղծել նոր գիտելիք: Ուսուցման գործընթացում կարևոր է ոչ միայն գիտելիքը, այլև ըմբռնումը, կիրառումը վերլուծությունը, համադրումը, արժևորումը: Այս աստիճանակարգումը դարձել է ավելի տրամաբանական: Անդերսոնը գիտելիքը փոխարինեց հիշել բայով, իսկ համադրությունը առաջարկեց ստեղծել բայով: Այդ արտոնոմիաներն են, գիտելիք, ըմբռնում, կիրառում, վերլուծություն, համադրում, արժևորում: Եվ հիշել Լումբոնել, կիրառել, վերլուծել, արժևորել, ստեղծել: Այս երկուսն էլ շատ կարևոր են դասապրոցեսում: Այս աստիճանակարգումը հաժախ ներկայացվում է բուրգի տեսքով:

Մինչդեռ Բլումը երբեք չի օգտագործել բուրգը իր տեսությունը բացատրելու համար: Բլումը դասակարգում չի արել, հետևաբար գիտելիքը ուսուցման ստորին մակարդակը չէ: Ուսուցման փուլային պլանավորումը շատ կարևոր է: Մեր կարծիքով ուսուցումը տեղի է ունենում գիտելիքի փոխանցում գիտելիքի յուրացում մեխանիզմով: Մինչդեռ իրականում սովորելու գործընթացը փուլային է: Եվ այն կարևորում է աստիճանական ձևով: Այդ առումով կարող ենք ներկայացնել մի քանի փուլային տաքսոնոմիաներ:

Ուսուցիչներին դրանք օգնում են ուսուցումը տանել իմացության ցածր մակարդակից մինչև վարպետության ամենաբարձր մակարդակի: Այն շատ կարևոր է գիտելիքը վարքագիծ դարձնելու առումով: Սովորողը գիտի, որ գիտելիքը ուսուցման հիմքն է: Բայց այդ բավարար չէ և պետք է դարձնել օպերացիոն: Երկրորդ մակարդակում սովորողը պետք է գիտելիքը գործողության մեջ դնի և իմանա, այսինքն հասկանա: Հաջորդը .սովորողը պետք է կարողանա ցույց տալ՝ ինչպե՞ս: Եվ վերջապես սովորողը պետք է կարողանա կիրառել:

Եթե սովորողը անցնի այս փուլերով, ապա կարելի է ասել, որ նա լիարժեք սովորել նյութը: Այն կարելի է ցույց տալ այսպես՝ գիտիմ գիտիմ թե ինչպես, ցույց է տալիս թե ինչպես, կատարում է: Երբ ուսուցիչները աշակերտներին մղում են աշխատանքի, կատարվում են թույլ տրվող սխալներին կամ հակառակը՝ երբեք չեն հասնում ինքնություն աշխատանքի փուլին:

Ուսուցումը բաժանվում է չորս փուլերի՝ առաջինը կառուցվածքայինն է, այս փուլում ուսուցումը ուսուցչակենտրոն է, քանի որ աշակերտները թեմայի վերաբերյալ դեռևս գիտելիքներ չունեն: Եվ ուսուցիչը պետք է պլանավորի գործընթացը:

Հաջորդ փուլում ուսուցչի դերը նվազում է, իսկ աշակերտների ինքնուրույն գործողությունների ծավալը աճում է: Այս ժամանակ աշակերտները ինքնուրույն տեղաշարժվում են լողավազանում, բայց ուսուցիչը դեռ վերահսկում է գործընթացը: Աշակերտները կատարում են ուսուցչի հրահանգները: Հաջորդ փուլում աշակերտների ինքնուրույն գործողությունների ծավալը աճում է, իսկ ուսուցչի դերը նվազում:

Հաջորդ փուլում ուսուցիչները միայն ուղղորդող են և անցնում է կատարվում ուսուցման փուլին:

Վերջին փուլում աշակերտները լիարժեք ինքնուրույն սովորողներ են իսկ ուսուցիչը պարզապես հետևում է նրանց և անհրաժեշտության դեպքում աջակցում է աշակերտներին:

Կրթության որակը բավականին բարդ հասկացություն է: Կրթության որակ սահմանելով սահմանում են կրթության չափելի արդյունքներ: Այն առնչվում է կրթության մատչելիությանը: Եթե որակը հնարավոր չէ առցանց կրթության մատչելիության, ապա մատչելիությունը իմաստագրկվում է: Գիտելիքաստեղծ ու կարողունակահեն գործունեությունը որակյալ կրթության հիմքերից է, որը կարող է բերել կյանքի զարգացման նոր ուղիների և մոդելների ստեղծման և զարգացման նոր ուղիների և մոդելների ստեղծման և զարգացման:

Կրթության որակի չափման համար հաճախ հետազոտողները հիմք են վերցնում տարբեր երկրների կրթական համակարգերի համեմատականության սկզբունքները: Կրթության որակը ներառում է բազմաթիվ բաղադրիչներ: Դրանցից առաջինը ուսումնառության արդյունքներն են, որը պահպանված է սովորողի կողմից և ապահովում է շրջանավարտի պատրաստվածությունը, ուսումը շարունակելու կրթության հաջորդ մակարդակում անցնելու համապատասխան աշխատանքային գործունեությունը: Կրթության որակի բարձրացման գործողությունների շրջանակում նշվում են հետևյալ հիմնական կետերը.

1. Կրթական չափորոշիչների ծրագրերի բարելավում:
2. Հանրակրթական ուս. հաստատությունների շենքային պայմանների բարելավում, ապահով, անվտանգմիջավայրի ստեղծումը:
3. Բարձր որակավորում ունեցող մանկավարժական անձնակազմի ապահովում, որոնք տիրապետում են ժամանակակից դասավանդման մեթոդներին:
4. Կրթական պաշարների և ուսումնական գրականության որակական բարելավում: Կրթության որակի չափման համար հաճախ հետազոտողները հիմք են վերցնում տարբեր երկրների կրթական համակարգերի համեմատականության սկզբունքը: Համաշխարհային բանկը նույնպես փորձել է տալ կրթության որակի

սահմանումն իր <<Կրթության առաջնահարթություններ և ռազմավարություններ>> զեկույցում հետևյալ գնահատմամբ <<Կրթության որակը դժվար է սահմանել և չափել>>: Համարժեք սահմանումը պետք է ներառի սովորողի գիտելիքների արդյունքները: Շատ մանկավարժներ կարող են սահմանման մեջ ներառել կրթական փորձառությունը, որը օգնում է ստանալ կրթական այդ արդյունքները, այլ կերպ ասած կրթական միջավայրը: Կրթության որակը ներառում է բազմաթիվ բաղադրիչներ: Դրանցից առաջնահերթը ուսումնառության արդյունքներն են ,որոնք պահանջված են սովորողների կողմից, և ապահովում են շրջանավարտների պատրաստվածությունը՝ ուսումը շարունակելու կրթության հաջորդ մակարդակում կամ անցնելու համապատասխան աշխատանքային գործունեության:

Որակի սահմանման մեկ այլ մոտեցում էլ առաջ է քաշում այն հարցադրումը, թե արդյոք կրթության որակը միայն լավ սովորելն է, թե ոչ: Սակայն այստեղ հարց է առաջանում նույն սովորածի բովանդակային կողմի վերաբերյալ: Այս տեսանկյունից կրթության որակը պետքական գիտելիքների արդյունավետ յուրացումն է: Պետք է նշել, որ կրթությունը աշխարհի շատ երկրներում չի առնչվում կյանքի հմտությունների հետ: Հայաստանում կրթության մասին օրենքում լիացումներ կատարելու մասին օրենքը ընդունվել է 2016թ. մարտի 16-ին:

Այնտեղ սահմանվել է կրթության որակ հասկացությունը: Այն կրթական քաղաքականությամբ սահմանված

նպատակների և խնդիրների իրագործմանը միտված կրթության կազմակերպման չափելի արդյունք է, որը գնահատվում է հաշվի առնելով սովորողի անհատական կարիքները. Կրթության կազմակերպման միջավայրը, ուսուցման ծրագրային բովանդակությունը, կրթության կազմակերպման գործընթացը, և ուսումնառության գնահատված արդյունքները՝ համաձայն սահմանված չափանիշների: Կրթության որակի սկզբունքներն են <<մատչելիությունը>>, որը շարունակում է մնալ Հայաստանի կրթական համակարգի խնդիրներից մեկը տարաբնույթ պատճառներով: Դրանց շարքին են դասվում կրթություն ստանալու հետ կապված խոչընդոտները: Այս խնդիրները հաղթահարելու միջազգային փորձը կրթության մատչելիության ապահովումն է, առանց

որևիցե խտրականության: Սովորողը պետք է ունենա ընտրելու իրավունք և սովորելու իր կարիքներին, անձնական ունակություններին նկրտումներին համապատասխան կրթական ոլորտում: Բոլորին կրթության հասանելիության ապահովման կարևոր սկզբունքներից է վաղ հասակից հավասար հնարավորությունների ապահովումը: Պետությունը պետք է ունենա հնարավոր քաղաքականություն չներառված ռիսկի գոտում գտնվող քաղաքացիների համար հնարավորություններ ստեղծելու: Սովորողը պետք է ունենա իրավունք ներգրավված լինելու կրթական գործընթացի բոլոր փուլերում՝ ծրագրի մշակումից մինչև որոշումների կայացման գործընթաց: Ինչպես տվյալ կրթական համակարգի շրջանակում, այնպես էլ քաղաքականության մշակման համատեքստում: Մեփական կրթական գործընթացին մասկացությունը կբարձրացնի սովորողների մոտիվացիայի մակարդակը: Կապագովի թափանցիկությունը և կապահովվի կրթական վերջնարդյունքների կայունություն և զարգացում: Սովորողը պետք է ներգրավված լինի կրթական գործընթացի բոլոր փուլերում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. <<Դասավանդման ժամանակակից մոտեցումներ և մեթոդներ>> ձեռնարկ, 2017թ
2. Ուսուցման արդյունավետ հնարներ / Ս. Խաչատրյան.- Եր.: Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամ, Հայաստան 2020.